

Արքայի պատուի  
շրջանակութեան  
պահանջման  
ժամանակակից  
Տաճար Ա. Տ. Կ.

ՀԵՄ ԱՎՃԻ ՀԵՄ ՃԱՄՊԱԶ  
ՀԵՄ ՃԻՆԻՎԻԶ  
ՄԵՓԻՍՈՓԵԼ.



1870р

ԱՏԱԿԴԱՅ Է 1958

# ՄԵՓԻՍՏՈՓԵԼ



# ՄԵԾԾՈ-ՄՈՏԱ. Ա.Ի.ԵՏԱՐԱՆ

ՈՐ ՔԱՐՈՉԵՅԻՆ ՄՇԱՅ ԱՌԻԼԹԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ԵՒ ԵՍԱՅԻ Վ.Ա.ՐԴԱՊԵՏՆԵՐԸ

Ի 11 ՓԵՏՐՈՒԱՐԻ 1870 Կ. ՊՈԼԻՄ

Տետոփինկ, աւտոմարտոխինկ,  
Զուռնայ փշիկ, թուխմանուկինկ,  
Եփէ գադայ, ու քուլեչայ,  
Եղն ի վրեն կը պճպճայ,  
Ուտէ ետայ, խմէ ետայ,  
Հաղնի ետայ եղմէ ետայ...

ԽՈՏԻԳՎԱԾ 357

ԻՐԱԿԱՆ և ջօշափելի ճշմարտութիւն  
մ'է որ խոտաճարակ կենդանիները՝ հոն  
կ'արածին, ուր որ կ'ապականեն. և փու-  
խադարձաբար՝ հոն կ'ապականեն, ուր  
որ կ'արածին.

Ասանկ ալ Մշոյ Եսայի և կարապետ  
վարդապետները Ազգին քրտնաթոր վաս-  
տակոցը մէջ մինչեւ հիմայ լաւ մը յըդ-  
փանալնէն վերջը, այսօր առանց երես-  
նին երկու ձեռքերնուն մէջ ծածկելու  
անդուդն անուանաբկական հրապարա-

կախօսութեան կ'ելլեն նավս՝ այն քաղաքին մէջ, որուն ազգ երիտասարդութիւնը՝ իսկառած կոչելու չժպրհած ատեննին՝ միանգամայն անոր դատողութիւնը իրենց երկասիրութեանը վրայ կը հրաւիրեն :

Երկրորդ, Մշոյ եւ ժողովութեան կ'անուանեն այն գաւառի հասարակութիւնը՝ որուն շնորհ ետալոյն թիւներն ըլլալնին՝ նոյն իսկ իրենց ստորագրութիւնովսին կը հաստատեն՝ ուրբաթով ծոցւոր երեւանքնի անուն ուղարկուածունեան տետրակին մէջ :

Նազովրեցւոյն ժամանակակից՝ օրէնտսայց փարիսեցիներն ու քահանայապետներն ալ այս երկու ընտրեալ Անօններուն պէս ճնճղուեներ քամած և ուղտեր կը լած ժամանակին ասապուրը կ'ուտէինու

Հապա ի՞նչ կ'ուզես. միթէ անոնցմէ վար մնան մեր այս Նոր – օրինաց դպիրները. Որք ամաչել ամաչելով տես Պատրիարքին դուռը որչափ ուժգին ափ կ'առնեն և ի՞նչ չարիքներ կ'ուզառնան Ս. Հայրիկին դլխուն եթէ իրենց օրական սպարենը հսդալու միջոցը՝ այն է Ա.

ւետարանի քարոզութեան պաշտօնը բառ  
շաբաթիով (։) մը իրենց մատակարարելու  
շնորհը զլացուիւ:

Ասոնք ճիշդ այն աներես պապունիւթեան  
կը նմանին, որք գուներու ջեղակու կոտ-  
րելու չափ զարնելէ ետքը՝ ձեռքի գա-  
ւազաննին ալ գունէն ներս խօթելով՝ ու-  
ժնաժւ կ'ըլլան, կը կենան: Կամ սանկ ը-  
սենք: Խանութեան խանութի արուն կատու-  
ներուն ոկտօմ մսի վակալեր ՚ի վեր ցաթ-  
կրտելով՝ անընդհատ կը ճրվճրվան:

Վայ այն ժողովրդին, որոն քարո-  
յականութիւնը կամ հոգւոյ փրկութիւ-  
նը կը յանձնուի այնպիսի Եսոյեան և Դե-  
ւոնդեաններու, որք աւելի թատերա-  
կան ներկայացումներ տալու որամադ-  
րութիւն ունին, քանի թէ Յաւիտենակա-  
նին արձագանքն ըլլալու:

Եւ ի՞նչ է արդարեւ այն ողբերդա-  
կատակերդական նկարագիրը՝ զոր ըրտծ-  
են և Ներկայացում երկուց վարդապե-  
տաց Խրիմեան Սրբազնն Պատրիարքին ո  
անունով:

Ո՞չ ապաքէն այնպիսի խեղկատակու-

թիւն մ'է , որ թատերաբեմերու վրայ  
անդամ ներելի չէ , թաղ թէ եկեղեցա-  
կաններու ստորագրութեամբ հաւերառնե-  
առաջ հրապարակագրութեան մէջ :

Պարտքերնին՝ պարտքի վրայ դիզ-  
ուած , անօթութենէն շունչերնին հո-  
տած՝ ուտելու հաց չունեցող Սանքիւ-  
լոդները՝ տեսէք որպիսի յանութեան աշխա-  
տակիրնեւնեւ ՚ի լոյս կ'ընծայեն , միմիայն  
իրենց ցած վրէժինդրութեանը յագուրդ  
տալու համար՝ բաւական գումար մը վայ-  
ըապար զոհելով :

Ասկէ զատ՝ ։ Ճանապարհորդութիւն  
՚ի Մոլտավիա ։ անուն տետրակ մ'ալ ու-  
նին եղեր , որ տպել տալու համար ծախ-  
քի կարօտութիւն ունենալով՝ իրենց մօտ  
պահուած կայ եղեր՝ իբրեւ զբան է կետ  
և լունէր է գետ ։ ։ ։

Երեքշաբթիէն՝ ուրբաթէն դլուխ ա-  
ռած չունին որ՝ ատոր ալ հոգը հոգան :  
Բայց թող չցաւին՝ տեսածի խըտար ե-  
զանք , զահմէթ չուզեր :

Իշկէմպէճի դազանընտան՝ դատիֆէ ,  
ճանփէս չըդմազ եա . . . :

Յամախսուլուպը ողջ ըւըյ՝ օր մ'ալ  
այդ աղայութիւնը՝ իր արբանեակներու  
վը մէկտեղ ձեռք ձեռքի տալով՝ ձեզի  
կ'ընեն անշուշտ, օրթալըխը չըրայի պէս  
վառելով ալթ իւսթ ընելու համար . . . :

Եիտակը խօսելով՝ ասոնք ազգերնուս  
պզտի ծառայութիւն մը ըրած չեն սեպ-  
ուիր, երբ հրապարակաւ ամենուս կ'ի-  
մացնեն թէ՝ Ս. Պատրիարքին դէմքը  
թթուած է, թէ փորը կիսով չափ դրա-  
սեղանին վրայ կը դնէ՝ երբ դիր կը դրէ,  
թէ՝ յօնքը կը ճմռէ, թէ՝ յօնից երկայն  
և շէկ մազերը կը քանդէ՝ դետին կը թա-  
փէ, թէ՝ յօնից հետ կը խաղայ, թէ՝ ցու-  
ցամատը երկնցնելով՝ պինչը կը կոխէ և  
կը խառնէ, թէ՝ ոտք ոտքի վրայ դնելով  
կը բազմի, թէ՝ աչքերը խոշոր են, թէ՝  
ծխախոտի փաթեթը ճկտաձեւ խողովա-  
կի մը մէջ տնկած՝ կողմնակի բերանը  
կառնէ ու զայրագին կրիւք ծուխը կը  
ծծէ, թէ՝ ծխամուրճը դորշախայտ պե-  
խերի երկայն մազերուն մէջը կը թաղ-  
ուին, թէ՝ մառախլապատ ծուխը՝ Արքա-  
զանին դէմքը ծածկելով՝ իրեն չնչառու-

թեան միջոցում պէնայի նման յերկինս ՚ի  
վեր կը ծառանայ , թէ՝ Սրբազնը կը դիւ-  
ւահարի և կը փրփրայ և զայրացեալ որը-  
տիւ կը դուայ , թէ՝ դլուխը կը շարժէ ,  
թէ՝ անզուսպ կիրքերով զօրացած՝ սեւ  
արեան շառագնութեամբ դէմքը կ'այ-  
լայլի , և ամրան եղանակի նման շանթա-  
հար և թուխ ամպերով կը մթագնէ , թէ՝  
երրեւ զԱրջ որդեկոտոր կ'որոտայ , թէ՝  
ճակատին մորթը բօնթ բօնթ հեծած կը  
կըճռի , թէ՝ քթի ծայրը չորեքօրեայ մե-  
սելի մը քթի ծայրի պէս կը սրանայ ,  
թէ՝ սանդրի մատների պէս յօնից մազե-  
ըը կը ցցուին , թէ՝ աչքերը խոր ընկած ,  
ուղեղան մէջ պտուղներէն կրակ կը ցայ-  
տէ , թէ՝ մութ շրթունքը կապտած չիք  
պարզ կը լինի , թէ՝ բերանէն խոր մութ  
թոնների պէս հուր կը բորբոքէ , թէ՝  
ներբովգայ գլխուն ծծմբային հանքին  
պէս քթէն ծուխը դուրս կուտայ , թէ՝  
ատամները ճարտառ քարին նման մէկը  
մէկին զարնելով՝ կը կըճտէ , թէ՝ ձեռ-  
քերը ձիգ ետեւ փակած՝ սրունքներէն  
մինչ ՚ի թիկնամէջ կը դողայ , և լկուե-

լով ոտքերը գետինը կը կոխէ, և ծռնչ  
կերը դինեհարի պէս մէկղմէկ փաթառ  
լով՝ քայլ կը փոխէ, թէ՛ ձեռքերը շեշ-  
տակի նման մարդու վրան թափ կու-  
տայ . . . .

Ալ բան միանց թէ՛ր են ձեռքի վրա-  
յի կոծիծները, հապա ոտքին նասըրնե՞  
րը ։ Ասոնք ի՞նչպէս եղեր մոռցուեր են ։  
Եթէ Սրբազնոք ձեղ բաղնիք մը տանե-  
լով, հոն ու զածնուդ պէս անդամազնուու-  
թիւն մը ընէիք, տակաւին ի՞նչ մազեր  
պիտի ունենայիք համրելու և ի՞նչ ոս-  
կորներ նկարագրելու ։ Այս կարգի յա-  
ջողակութիւններ եկեղեցական բեմքա-  
խօսութիւններու չեն նմանիր՝ որ պա-  
պանձիք մկաք ։ 40 տարուան կտրողա-  
ցած Աւետարաններնուդ մէջէն թէ որ  
վկոյութիւն մը բերել հարկ ըլլայ, լե-  
զունիդ կը կապուի և բերներնուդ մէջ  
չդառնար Հազիւ հազ է+էկէ+է+էմը անուշ  
աեղը կը կապէք ։ Եւ Ա. զրոյ խօսքերը  
մէջ բերած ատեննիդ՝ շրթունքներնէդ  
փլած պատի քարերու պէս կը թափիթը-  
փին ։ Քանզի առ Այն ընտրուած չէք ։

Երբ Հայաստանեաց Եկեղեցւոյ դէմյաշ  
խուռն և անխիղճ յարձակումներ կըլլան՝  
դուք գասալիք զինուորք, ի՞նչ կընէք  
այն ատեն: Վերմակնիդ զլուխնիդ կը  
քաշէք, Յոմիանու քունը կը խորդաք:

Դեռ մօտ ատեններս կը տեսնաք և  
կիմանաք որ Գամբըրճեան մը կը հաշէ,  
Մանդակունի մը կը հառաշէ, դուք՝  
վարձկան հովիւներ, տաք արեւուն դի-  
մացը անցած շապիկներնուդ եախային  
ոչինները կը կոտրէք: Անգիէն Զամուռ-  
ճեան կը զրաբարտէ, Յոյսը կը պարտըկէ,  
դուք՝ անզգայ էակներ, մէն մի անկիւն  
քաշուած բաշաններնուդ բիրէնները կը  
քըթւըտէք: Քիւրտերը, Աւշարները ժո-  
ղովուրդը կը կեղեքնեն, դուք արիւնար-  
բու դազաններ, վանքին կաշտեն ելած  
կովերը կը կթէք: Բարբարոսները ձեր  
աշքերուն դէմյանդուդն սրբապղծու-  
թիւններ 'ի դործ կը դնեն՝ դուք՝ դայլք  
յակիշտակողք, ծառաստանները բացօթ-  
եայ տեղեր նստած հերիստ կը ծեծէք: Քը-  
թերնուդ տակ խժդժական առեւանդ-  
ներ տեղի կունենան, դուք՝ անգութե-

անտարբեր՝ պարարտ մատադներ կօրհ։  
նէք ու լըրըուտելով կը ճաշակէք =  
Խստասիրտ հարստահարիչներ՝ աղ-  
քատին խրճիթը կը փլցունեն, դ՛ռք,  
անխիղճ և անհոգ, պաղարեամբ հանդի-  
սատես միայն կը կանգնիք =

Սրբազն Հայրիկին գլխուն, մօրու-  
սին ու պեխերուն մաղերը համրենուգ՝  
ձեր գաւառի ու վիճակի աղգայնոց ցա-  
ւագին վշտերն ու թշուառութիւնները  
թուելով՝ անոնց դարման մը հայթայիթե-  
լու ջանքը հոգացէք, որ ձեր ուսերուն  
վըայ դիղուած այնպիսի ծանր պարտա-  
կանութիւններ են, որ երբէք չէք կա-  
րող վրանուգ նետել առանց ձեր կոչ-  
ման դէմ ոճրադորձէ մը շատ և շատ ա-  
ւելի մեղանչած ըլլալու :

Եթէ կուղէիք այդպիսի խայտառա-  
կութեան տիպար մը եղող հրատարակու-  
թիւն մը 'ի լոյս ընծայել՝ զոր ակն ոչ ե-  
տես, և ունկն ոչ լուաւ և 'ի սիրտ մար-  
դոյ ոչ անկաւ, թող ձեր կենսագրու-  
թիւնը հրատարակէիք, ուր ամենայն ինչ  
կատարեալ է . . . Բայց իմ ծիծաղս ձեր

Վրայ աւելի շարժող կէտը այն է թէ  
կամ ուր ուրեք և իցէ Աւետարան քա-  
ռոզելու պաշտօն կը խնդրէք, եւ կամ  
վանք վերադառնալով՝ Թաճաբար պաշ-  
տօննիդ վարելու արտօնութիւն մը կու-  
զէք :

Նատ բա՛ն, զեմ գիտեր թէ այս վե-  
րապատճելի ճիւաղները ո՞ր հեթանոս  
ազգ աց մէջ քարոզութեան գացին՝ ու  
ետեւնուն մարդ զբկուելով ետ դարձու-  
ցին, Ո՞ր ժամանակ միամստարար պաշտօն  
վարեցին, ու անոնց ազօթքներն ու մաղ-  
թանքները բռնարարուեցան :

Մեր առածելուն նուիրակները՝ աւելի  
Զինումաշինի Երի ային բաժանուր Անեան պաշ-  
տօնեայներ՝ քան թէ Երկնից ճշմարիտ  
արքայութեան աւետարանողներ՝ հերիք  
չէ որ մինչեւ հիմա պաշտօն, պատարագ-  
ըսելը՝ պատրած, պատրած + հասկցեր են :

Մինչև Երր կրոզեն որ յանուն վար-  
դապետութեան աղդը խարելով՝ անոր  
արիւնը ծծեն :

Անցա՛ն, անցա՛ն այն ժամանակները՝  
Ներկայ դարուս մէջ յարդը՝ իրական

արժանիքներուննէ , և ոչ թէ սոսկ տիտա-  
ղոսներու տակ ծածկուած մարդամեքե-  
նաներու : Յ

Հին ատեննները՝ մէկ վեզար մը 40 վար-  
դապետ մէկէն կընծայէր , բայց հիմա 40  
վարդապետ մէկտէղ գալով՝ մէկ վեզար  
մը հազիս թէ կրնան յօրինել :

Մենք՝ եկեղեցւոյ ճշմարիտ հովիւնե-  
րը կը սիրենք , կը յարդենք և անանց  
պատուականութիւնը ոգւով չափ կը ճանչ-  
նանք . Այսկայն ձեզի պէս ամբարիշտներն  
ալ հրապարակաւ կշտամբելու ամենեւին  
խիղճ չենք ընելի :

Եւ ի՞նչպէս ամբարփշտ չկոչեմք Քրիս-  
տոսի այն հեռ աշակերտները՝ որ մինչեւ  
իսկ թ . Հայրիկի նման անզուգական անձ  
մը ձրի զրպարտութիւններով նշաւակել  
կը յանդդնին :

Այն անձը կըսեմ , որ ընդհանուր աղ-  
դին երկու աշացը լցոնն է , սեւազքօղել  
կը ջանան մնդոք լրբաւթեամբ :

Զգործած մեղքերու թողութիւն մը ,

Հայրիկը՝ Մշոյ միաբանութեան գըլ-  
խուն շատ չարիքներ հասուցած է եղեք :

Վանքը քանդեր, կործաներ, հիմնայատակ  
ընելու մաղմ'է մնացեր, ու անոր գոյքը  
և կալուածները վատներ, փճացուցեր և  
այս հաստատոթեան իրեն դլխաւոր  
Միւներն եղող Եսայի ու կարապետը՝ մու  
խիրի վրայ նստեցուցեր է :

Ենթադրենք թէ՝ կէտ առ կէտ իրաւ  
ւացի բողոք մը եղած ըլլայ — այդ ամեն  
ըսածներնին — , թէ իրաւցնէ վանքին  
Եօրէ-Տճէն-Երը քանդած ըլլայ և միաբանու  
թիւնը շառէ վրայ նստուցած :

Արծաթները ժողված, ոսկիները տոպա  
րակը լեցուցած, պղինձները համբառ  
լանմիշը ըրած . . . . .

Այս լացն ու ողբումը նիւթական հայ  
ըրստութեանց վրայ միայն ըրած ատեն  
նին, ինչո՞ւ չեն ցոյց տար՝ որ այս ինչ  
ըարեկարդութիւննին խանդարած, այն  
ինչ դպրոցներնին դոյցուած, տապարան  
նին ցրուած, թանգարաններնին կործան  
ուած, երկասիրութիւններնին այրուած,  
ձեռագիր մատեաններնին յափշտակուած  
ըլլալը : Ես ալ ի՞նչ կըսեմ, ատոնք ո՞վ  
ցաներ է որ, ո՞վ քաղէ :

Երաղ կը տեսնեմ, ի՞նչ կը նեմ՝ ջնացիս, ապոնք այն տեսակ բարոյական պիտոյքները ծալլած ըստ դրած են, վանքէն ներս՝ արծաթները կուլտն ու դուրսը ոսկին ու դրամը կողքան . հաշուեցուց յակնուն մէջ՝ ծախսի գումարը կ'արտասուեն . նուիրակութեան պաշտօնի մը նիւթական արդիւնքները կը հոլովեն վերջապէս համքարանութեան վրայ ամենուրեք ՚ի ձուոյ ճառելէն չեն կշտանար մեր այս կռապաշտից քուրմերութուան թոռները :

Այս պինդերեսութեամն շրջանին մէջ կելնեն Ս. Հայրիկին խնդրագիր մ'ալ կուտան, ուր կը խոստանան թէ՝ ինչ որ իրենց ըստի, կամ ինչ գործի որ զիրենք դրուի՝ ամենայն հնագանդութեամբ պարտաստ են, ՚ի մահ և ՚ի կեանս .

Կեցէք, այդափ առաջ մ' վաղէք Մշոյ դաշտերուն մէջը չենք՝ որ շտապով վանքին ձիերը ճաթեցունեք . Ուր մահուան կը պատրաստուիք, երբ փոքր ինչ կշտամբանաց անդամ չէք ուղերտանիլ :

Դեռ խորազանին ծայրը չտեսած՝  
հաւատքնիդ ուժելու երաք՝ ապերանա  
ուրացողներ :

Եւ տակաւին ի՞նչ խաղեր պատրաս-  
տոծ ոնեիք արդեօք խաղալու՝ եթէ  
առաջանու առնուած ու մօրուքնիդ համ-  
րուած չըլլար : Եւ եթէ վարչական շրջա-  
հայեաց արթնութիւնը՝ ձեր ակռաները  
մէկիկ մէկիկ քաշելով՝ ձեր գլխուն այն  
անավնկալ հարուածը չի տար, որ ձեզի  
աղիօդտէ, ձեր արբանեակներուն ալ . . . :

Եւ ի՞նչ է այն երկրորդ կէտն ալ՝ որ  
պործի մը գրուիլ կ'ուղէք :

Միթէ Պատրիարք մը՝ ձեզի համար  
ֆապրիկաթօր մ'է, որ մեքենաներնիդ  
ձուշելու համար ուղաճնուդ պէս ձեզի  
մէյ մէկ տեղ պատրաստէ :

Դուք, որկորապաշտ Շարաներ, եթէ  
բառականմաբութեամբ և եթ ապրիլ ու-  
ղէիք, եթէ ձեր կոչման համեմատ խղճի  
մոօք պաշտօն միոյն վարել ըլլաք վա-  
վաքնիդ, աղդին մէջ ձեզի ոչ հաց կը  
պահսէր ուստեղու և ոչ տեղի աղօթելու :

Դուք, անարժանաբար Աւետարանի

ուսուցիչ անուանեալներ, կրօնից դիմակներ, հաւատոյ դերասաններ, բարոյականութեան խաղալիքներ = ԶԵՔ կարգար, այն Աստուածային պատգամը թէ՛ և Խնդրէք և ոչ առնուք, վասն զի չարաշար Խնդրէք " :

Եւ ինչո՞ւ կը զայրանաք աներեսներ, Ս. Հայրիկինքով երես չունենալնուդ վրայ: Ո՞չ ապաքէն նա լաւ կը ճանաչէ իր ձախակողմեան աւաղակները : Փորձեալն կրկին փորձելը յիմարութիւն չէ մի :

Վկայ նոյն իսկ ձեր այն խօսքը՝ որ լկտօրէն կ'ըսէք սրիկայական տետրակնուդ մէջ, թէ « կը կարծէինք որ Պօլսոյ մէջ կարմիր ոսկիները կարկուտի նման մեր դլխուն պիտի տեղային » :

Այդ ուիշտ երեւակայութեամբ չէիք վախնար, որ եթէ իրօք այնպէս ըլլար՝ գլուխնիդ ջախջախուելու և պատռելու վտանգի մէջ պիտի մնար :

Բայց ինչո՞ւ վախնան, գոնէ գլխերնուն նէդէն նէու մ'ալ աւելի բացուած կը լայ՝ քանի մը աշուն կարմրուկ ալ հոն տեղաւորցնելու համար :

Առնավուտին սկզբանցը համեմատ  
թէ որ ըսուելու ըլլայ ձեզի, դժոխք  
կերթաք. « Մօռէ այլրդ դա՞չ կըուշ» ըլ-  
լալը կը հարցունէք :

Երկու ձեռքերնին ճակատնին դնե-  
լով հրապարակաւ աշխարհի հրաժեշտ  
կարդացող՝ այս երկու ամբարիշտ խա-  
բուսիկները, արծաթամոլ Ալպանացիէն  
ի՞նչ վար կը մնան, երբ իրենց չար և ան-  
գուստ կիրքերն շահամոլութեամբ ցա-  
ծուցանելու համար՝ մինչեւ իսկ իրենց  
ներքին մարդն չարաչար և անխնայ սպան-  
նած ատեննին՝ « Մօռէ կէնէ եազրդ  
կուռշունէ » կըսեն :

Զեր անձին նկատմամբ յունկանէ լրս-  
ուածները՝ դուք ինքնին՝ ՚ի վերայ տան-  
եաց քարոզեցիք :

Վարքերնիդ և բարքերնիդ ի՞նչ ըլ-  
լալը դրաւոր վկայականներով ապագա-  
յին աւանդեցիք :

Այդ նորատիպ աղուեսամաստենիկով  
մշտաբարբառ արձան մը կանգնեցիք,  
վրան ալ թիւյ մը տնկեցիք յաջորդ դա-  
րերուն փողփողելու համար թէ՝ ար-

գարեւ սրբուած է ամօթը ձեր երեսէն և  
օծումը ձեր ճակտէն :

Ձեր բարոյականութեան հայելին այն-  
պիսի հաւատարիմ կերպով ստորագրած  
էք յանդէտս, որուն մէջ ամեն գաղտնա-  
ծածուկ դաւադրութիւններնիդ յայտ  
յանդիման նկարագրուած կը տեսնուին:  
Վասն զի չիք ինչ ծածուկ, որ ոչ յայտ-  
նեսցի :

Ո՛վ կարողէր ձեզ այնչափ վատահամ-  
բաւել, որչափ դուք զձեզ վատահամ-  
բաւած էք՝ ամբիծ և անարատ անձ մը  
հրապարակագոյժ ընել կարծելով:

Ցիզմերը՝ որչափ ասկականիչ ալ ըլլան՝  
գարձեալ կընա՞ն ադամանդի մը բնա-  
կան յատկութիւնը ու սեպհական ազնու-  
ութիւնը կորսնցնել տալու չափ զայն աղ-  
տուել :

Չէ, չեն կընար :

Ինչպէս չեն կընար նաև արդարա-  
նալ ձեր գործած նախճիրները՝ պատմու-  
թեան առջե, թէև հազարումէկ ջատա-  
գովական հրշեալու ալ ունենաք :

Կը վատահեցնեմ զձեզ, որ այսուհե-

տեւ ամենեւին աղատ էք , աներկեւան  
խիզախելու , թշնամանելու , խօսելու , գը-  
րելու և գործելու , ինչ որ ձեր բնու-  
թեան և ճաշակին յատուկ և վայելուչն է :

Զի այն օրէն ՚ի վեր , յորում ձեր նո-  
վու պատկերը տպագրական լուսանկա-  
րով հասարակութեան ընծայեցիք , կեն-  
դանի մեռեալներ էք ողջմոռութեան առ-  
ջեւ :

Հայ աչքերը շատ տեսած են ձեզի պէս  
ազգութեան , կրօնիւ հայրենեաց նախա-  
տինք վասակներ , Մերուժաններ , Սուր-  
մակներ , Շմուէլներ , վեստ Սարգիսներ :

Գիտեմք , որ երկրիս վրայ որչափ  
մարդկութիւնը տեւէ՝ այնչափ մարդկա-  
յին հրէշներն ալ պակաս չպիտի ըլլան ,  
առաքինի անձանց յարդն ու պատիւը  
աւելի փառաւոր ընելու համար :

Գաղաններուն ամենն ալ պույնուզ  
չեն ունենար եա :

Կրից բորբոքք՝ այն աստիճան սաստ-  
կացած կ'երեւնայ ձեր սեւ արեան շըր-  
ջանին մէջ , որ ամեն սահմաններէ դուրս  
ցատկելով՝ ընդհանրութիւնը ձեր մատ-

Նաւոր նախանձուն և ատելութեանը անպատկառ կը զոհէք, բարբանչելով թէ և Խրիմեանի ընտրութեան ատեն խենդութիւնը՝ հասարակաց էր ։

Ի շնամական հեռ կուրութիւնը՝ ո՞ր շտփ պաշարած է միտքերնիդ ու ոգինիդ, որ Գրիգորեան Մ. վարդապետը՝ Ս. Պատրիարքին նույնագ դէմէն ծիծաղ շարժելու շնորհք մը քաղելու մոօք քըծնութիւններ ընելուն վրայ Բաղաամեան մարդարէութիւններ ըրած ատեննիդ, առջեւնիդ ձեր ձեռքով բացուած մերկանդամ ստութեան խորխորատը չէք նըշմարեր, ուր թաւագլոր գահավէժ ըլլալով՝ աչքերնիդ, ունկերնիդ կը պատռէք բացատրենք ։

Դուք կ'ըսէք թէ՝ սրբազանը երեսով կեղծել և սրտիւք չարիք խորհել լաւգիտէ ։ Միանգամայն ձեր առասպելաբանութիւնը կը շարունակէք պատմելով թէ՝ « Երբ իրեն ներկայացանք՝ խոժորդէմքով մի մեղ հայեց, որոյ կանանչ չինիի համատիպ եղող պտուղներէն շանթ և կայծակ կը թարթափէր ։ »

“Թողումք ասել՝ զկորուտայրն, զդուտայրն, զդիւահարելն, զփրփրալն, և զայլ բազում զայրագին գոչումներն որոց ոչ գոյ թիւ։

Սա հակասութեան քառսին մէջ՝ մէկ աչքերնիդ լայ՝ մէկը խնդայ, այս երկու ստութեան կամ զրպարտութեան մին անպատճառ պէտք է խոսառվանիք։ կամ Սրբազնը՝ երեսօք կեղծել չգիտեր՝ որ զրպարտած էք, կամ ձեր վրայ ոչ աչքերը խոլորցուցած է և ոչ դէմքը նվաճեցուած՝ որ ստած էք։

Սա երկու տեսակ հասկեան նըլը կ'ուզէք կլլեցէք, ապա թէ ոչ ձեզի հաճախը կ'ընենք։

Այլ առակ լուարուք։

Երբ Սրբազնին կը ներկայանան՝ խոնարհաբար յետս յետս գնալով՝ մէկ մէկ աթոռի վրայ խասխաթի<sup>(1)</sup> կ'ըլլան՝ խոհարի

(1) Արդարեւ կ'ուզէի հոռ անարգական բառեր գործածել։ Ատոր համար չեմ սրբանար։ Բայց չեմ ալ ուզեր որ մեր անպիտանները՝ այս խասխանիք բառը՝ իրեւ նախատա-

հայէլը բազւաց ակնածունեաբ , և առանց աշքերնին վեր առնելու Որբազանին գըլ խէն մինչեւ յոտս մաղերը կը թուեն , կը ձեւեն , կը չափեն , և այնպիսի մանրա կը րկիստ սուր տեսութեամբ կը նկարագրեն , որ տակէրօտիպը կը հիացնեն :

Ծխախոտի բաթեթը՝ լաւ մը կը դըն նեն , ու անկից ելած ծուխը՝ ֆիզիգական , բնազանցական , երկրաչափական և մաթեմաթիգական հաշիւներու տակ կը ձգեն . ծխամործի վիճակը , դիրքը ձեւն ու կացութիւնը կը քննադատեն և այս

---

կան նշանակութիւն ունեցած կարծելով . իրենց բերնի խօսքերուն կարգը ինչ բան ունենալուն վրայ զարմանան . զի այս պարբետութիւնը՝ իրենց գրուածքէն քաղուած՝ հարառօտութիւն մ'է . Թող գիտնան ուրեմն , որ այս բառը ճիշդ նստիլ կը նշանակէ՝ Յուարէն +ացէ +անօ բառէն ելած , որ «նստէ ար» ըսել է :

Աս՝ այնպիսի աղճատեալ բառ մ'է , որ աճկերէնի եւ ռամկօրէնի մէջ միանգամայն նխտիր կը գործածուի , ասոնց պէս աղէտագութառաւը անձերու համար :

ամենը՝ առանց աչքերնուն պոչովն ան-  
դամնայելու, և 'ի նշան ակնածութեան  
գիտէք ի՞նչ կընեն (խօսէ Ճտուակ, խօսէ,  
բերնիդ քիրա կուզես) :

Կարապետվարդապետը ձեռքը պե-  
խերուն տարաւ ոլորեց, հազեց, հըն և  
ասեց, «Ն չ' չ, և ու չ' է հ ։ ու յեն ճեն ։  
և ու բեց բեց :

Ահա և խօսք ձեր իսկ յայտ առնեն,  
զի և դուք 'ի քրթաց անտի նոցա էք :

Հոս ակնածութիւնը՝ իր քրդային  
մեկնութեամբը լրբութիւննշանակելուէ :

Խարդաւանութեան օրինակ մը :

Սերաստիոյ վիճակէն հաւաքած ստակ.  
ներնիդ Պօղոս պատրիարքին ամենայն  
հաւատարմութեամբ և որդիական հնա-  
զանդութեամբ յանձնենուդ վրայ Ռ.  
Հայրիկը ձեղի անդաւ դանդասներ ուղ-  
ղած ատեն տեսէք կեղծաւորք, թէ ի՞նչ  
կը պատասխանէք :

(Կարապետ), «Այն ստակները Պօղիս  
Մուխաթայի տուեցի և Պատրիարքին  
ինձ տուած ստացագիրն ալ վանական  
ժողովոյն արդէն տուած եմ, որուն ա-

տենապետ և ատենադպիրն ալ ձեր ձեռնասուն և ծոցասուն աշակերտ՝ գարեգին վարդապետն էր ու ։

Եթէ ձեռնասուն վարդապետ մը՝ ծոցասուն ալ պէտք է ըլլայ, դուք որո՞ւնն էք արդեօք ։

Ինծի մնայ նէ՝ մէկ կողմէն ձեր երկուքի մտերմութեանը ու իրարու հետ ունեցած սերտ կապակցութեանը նայելով, և միւս կողմանէ բնութեան ձեղի չնորհած յարմարագոյն տրամադրութիւնները նկատելով՝ խիստ հաւանական է որ այս մասին օտարի պէտք չունենաք ։ Մէկ զմէկու ձեռնադիր և ծոցասուն կրնաքըլլալ, ինչպէս և եղած ալ ըլլալու էք, եթէ ասի՝ ձեր օրինաց վարդապետութեան մէկ անժխտելի յատկանոնն է ։

Ա՞հ, լաթերով սատանաներ, փիլոն հագած կատուներ, ի՞նչ մեքենական հնարագիտութիւններ կը պարունակէ այս կէտը ։ Կէտ մը, որ մէկ հատիկ թարգման կրնայ կանգնիլ ձեր ամեն էլլան իւղի գնացից ։

Բայց նախ այս կտորին վրայ մեր

յարձակման իրաւունքները պարզենք ,  
և ապա տոպրակին երեսը վրան դարձունենք :

Արդ՝ ինչո՞ւ յանիրաւի նախատենք վանական մը՝ որ իր վանահօր հրամանաւը նուիրակութեան ելլելու բժիշոյ պաշտօնին յանձնառու կըլլայ :

Ինչո՞ւ մեղագրենք վարդապետ մը՝ որ Կ. Պօլսոյ Պատրիարքին կամացը կըհնագանդի (Աստուած պակաս չընէ ասանկ Հնազանդ տուտուները) , այնպիսի պարտականութիւն մը ճանշնալու համար , որ եթէ մերժելու ըլլար՝ մինչեւ հիմա շատոնց բայց մէջ ոսկորները պիտի փրտտէին :

Ա. յս չէ ինսդրոյն արտաքին կեղեւը մատրապաղնե՛ր :

Իսկ ներքին պատճենը բնազննենք մէկ անգամ՝ և տեսնենք թէ ի՞նչ թիւնաւոր հիւթեր կը պարունակէ իր մէջը : Ասոր համար ալ երկար աշխատութիւններ պէտք չեն :

Ընթերցողք կընան ինքնին իմաստասիրել հետեւեալ հինգ հարցու մներէն ,

որոնց մէջ կամփոփուին համանդամայն  
պատասխանիք և վճիռ :

1. Պօղոս պատրիարքը ինչէ՞ն պէտք  
էր գիտնալ՝ որ Սեբաստիայէն իրօք բա-  
ւական ստակ ժողոված էիք :

2. Ի՞նչ հաշւով կրնար իմանալ՝ այդ  
գումարին որքանութիւնը, և իր առ-  
նելիքի հէվոլէին թրփաթը դալը :

3. Ո՞ր հոգւով կարող էր մարդարէ-  
անալ առդ գումարը ձեզ մօտ պատրաստ  
ունենալնիդ :

4. Ի՞նչ իրաւամբ կրնար ձեր վրայ  
բռնանալ մուգաթայի մը պարտք ձեզի  
հատուցանել տալու համար :

5. Ի՞նչ սլատասխանատութիւն կըր-  
նայիք այս պատճառաւ ձեր վրայ հրա-  
ւիրած ըլլալ թէ նիւթապէս և թէ բա-  
րոյապէս :

Գիտէք, քանի քանի քսու ակնկա-  
լութեանց և ինչ ինչ օգդ ապազութեանց  
ենթակայ է ձեր այս ՀՀ-ՅՆ-ՌԷ-Ը, որուն  
հէմ ալան բիւշման. հէմ սաթան :

Հիմա տեղն է որ մամուս տարուան  
մնացած առած մը կայ անիկա քշենք :

Գողը՝ գողէն գողացաւ,  
Աստուած տեսաւ զարմացաւ .  
Ճէ՞ անիրաւ պըզպըզուկ ,  
Պօղոսն ուսկից իմացաւ :  
Շամախսուլուպի Փապրիքայի Խու-  
մաշներուն թախլիտը հրաշք մ'ալ :  
Խալանու գիւղի անցքը , Մշոյ աշ-  
խարհի խռովութիւնը , Ս. Կարապետի  
վանից մէջ պատահած աղետալի յեղա-  
փոխութիւնը մէջ բերելով Ս. Հայրիկի-  
ի հոգուն և հոգւոյ ունիւն , բարոյա-  
կանին խարունիւն , վերջապէս եօթնէն  
անդիի ճահացու հեղիւնը , այս ամենայն չար-  
եաց եղելոց պատճառ համարած և ա-  
մբուել առաջոց երած հաստատած միջոցին՝  
Ս. Հայրիկը ասոնց մէջէն առանց հովիտ  
մը՝ որ նշանախեց մի է . կարենալ ուրա-  
նալու՝ իրրեւ զղջման դաւանութիւն ա-  
մենամնադիր լռութեամբ կէտ առ կէտ  
ընդունել կսպասէ , որ խօստովանահայր  
վարդապետը դաւանսնքը վերջացնէ . և  
՚ի վերջոյ Ո. Հայրիկը մեղսաշարին դառ-  
նալով՝ իրրեւ սույն հեղու Առաջնորդոյ այսպէս  
կը պատասխանէ :

“ Տօյ անիրաւ , հապա դու քու արած  
չես ասեր ։ ”

Տետրակին մէջ մէկ քանի հարիւր տող  
բան շարունակուած կը տեսնամք , իր-  
բեւ Սրբազնին երեսն ՚ի վեր լրբարար  
ամբաստանուած այնպիսի մեծ պահքէն  
երկայն լավիրշ լուտանաց շարք մը՝ որուն  
դէմ պարզ ունկնդիր մը անգամ անհնար  
է որ անտարբեր լուռ կենար :

Բայց հրաշք մը ինչեր չդործեր :

Կ’ըսուի թէ՝ գիշերանց գողերը տուն  
մը մտած ատեննին , քնացողներուն վը-  
րայ մեռելահող կը ցանեն , որպէս զի քը-  
ներնին թանձրանայ՝ մինչեւ որ իրենք  
գործերնին տեղաւորցնեն : Կամ՞ որ նոյն  
է : Օգգապազները եղջերափողի հընչ-  
ման ոյժովը ույիւնիւրուա աշքերը կը կա-  
պեն , որպէս զի իրենց խաղին պատրանք-  
ները չյայտնուին :

Արդեօք , սինեօր Եսայի և կարապես  
տիրադաւները՝ ինչ հնարք բանեցուցած  
են նոյն միջոցին որ Ս· Հայրիկը՝ աչս ու-  
նի՝ և ոչ տեսանէ , ականջս ունի՝ և ոչ  
լսէի պէս սուսիկ բուսիկ նստեր ժամե-

ըով ասոնց անլուր հայհոյութիւնները մը-  
տիկ կ'ընէ առանց քիթն անդամ իրն-  
ջելու :

կարծեմ դէշ չըլլար՝ եթէ նոյն զրա-  
խօսութեան համառօտագիծ պատկերը  
հոս դնելու ըլլանք՝ ընթերցողաց յայտ-  
նելու համար անանկ մեծ առասպելա-  
հիւս ստութիւն մը՝ որ եթէ իրաւ ըլլար,  
արաստոյ քարերն իսկ սլիտի ճաթէին :

Լսենք ուրեմն և 'ի միտ առնենք :

“ Հայրիկ, երբ մենք Խզմիր գնա-  
ցինք, հոն ալ քէօ մատ խաղցուցիր . . . :

“ Խարէութեամք մեղ վանքէն դուրս  
հանեցիր՝ որ խաղդ խաղաս . . . :

“ Կարելի՞ է բան էր վանք դառնա-  
յինք, որ ձեր ներկի կարասը կուրը-  
ւէր . . . .

“ Կարապետ վարդապետէն տեղեկա-  
ցանք (մէխանաճիին շահիտը՝ սլողաճին)՝  
որ ձեր Սրբազնութիւնը՝ թմբուկը ձեռքը  
առած, ամենօր վանքի միաբանութեան  
հետ շուռը կը խաղայ և վանցի տղայոց  
հետը փատուկը . . . .

“ Ձեր Սրբազնութիւնը՝ Պօլոյ Պատ-

ըիարք որոշուեցաւ, չեմ սխալ իւ ասել  
ոչ այնքան բաղդի և յաջողութեան մի-  
ջոցաւ, որքան Հայ ժողովրդոց անվտյ-  
թութեան. մեղքը Փանոսեանի Տիտը,  
(ապաճի քէպէճի, Փանոսեան նէճի) ընդ-  
հանրիցի համոզումը յարգել պէտք ե-  
ղաւ, վասն զի խենդոթիւնը հասարա-  
կաց էր (Հասանին քիւ ֆիւրը՝ հիմայ հո-  
խունկի տեղ չանցնիր մի) ապա թէ ոչ  
փոքր բան էր, որ ձեր Արքազնութիւնը  
գէպ ՚ի Պօլիս Եկած միջոց՝ կարին քա-  
ղաքի մէջ գտնուող Դիոս և Հերմես կը-  
ոց քուրմերը՝ ձեղ գիմաւորելով Պօղո-  
սին և Բառնաբասին չզոհած մատաղները  
ձեզ կը զոհէին, (աչուընիդ կօղիկ օղ-  
լուին չիյտէմինը ըլլայ) և Պոնտոս հա-  
սած միջոյը՝ Պոնտացի կոյսերը և Երի-  
տասարդները (Ճերերու հետ կարծեմ  
բնաւ գործ չունիք) ոստովք և ձիթեն-  
եօք՝ ովաննայ ասելով՝ Ճաղկաղարդիտո-  
նը՝ նոյեմբեր 24 ին կատարեցին. (համ-  
բերութիւն կը մազթեմք Հայրիկին) և  
Պօղոյ Երիտասարդները (կէնէմի գայ-  
մագ) խաժամուխ բազմութիւն (բիւֆն

էք կերեր ) ձեր դիմաց ելած նոյն անձը  
ըեւին միջոց՝ երբէք կարելի՞ բան էր՝ որ  
սուրբ աստուած, սուրբ հրեշտակ, սուրբ  
աւերիչ՝ սուրբ կարապետի վանից, որ  
հարեր կործանեցեր ( վիշապներու գը-  
լուխն ջախջախեցեր ) և բարձրացար յա-  
թոռն Պատրիարքութեան կ'երգէին «  
Բայց անոնցմէ այն խուռն բազմութեան  
բորոտներէն ( դուք քան զամենը դոսոտ  
և խոցոտ ) և ոչ մի մարդ ձեր երանա-  
կան չնորհաց հաղորդակից եղաւ և ձեր  
Սրբազնութիւն՝ ոչ առ այլ ոք առաքե-  
ցաւ, բայց առ վարսագեղ վարժուհին  
Պոնտացի, որ Պոնտոսէն հետդ բերելով՝  
( չո՛ւ աւանակներ, չո՛ւ, չո՛ւ ) դրած  
էք պեկնոտ երես ժամկոչ Մարգարին  
տունը՝ ( հիմայ Մարգարը մեռաւ, պէք-  
ճի մը պէտք է կըլլա՞ք ) որ յաճախ Պատ-  
րիարքարան գալով՝ ձեզ պաշտումէ յա-  
մենայն անձնէ իւրմէ և յամենայն զօրու-  
րութենէ մտաց իւրոց ( որդնալից լիցի  
այն գարշելի բերան . . . ) : Մի ամիս ե-  
ղաւ՝ Պոլիսը եկած բարձր լեռը չմնաց՝  
որ Գողգոթայ չերեւակայեցիր, նաւա-

տորմիղները՝ երկան և հաստ գերան չը  
մնաց՝ ամեն օր խաչ կելնես, հայեր ձեր  
փառաւոր յարութեան կ'սպասեն, թե-  
շեւ իրենց յոյս դէպ 'ի աղատութեան  
և հոգւոյ վրկութեան գագաթը վերա-  
ծես (ասի կայիափային մարդարէութիւնն  
է) ջրաղացն ի՞նչ մոքի, ջրաղացպան  
ի՞նչ մոքի . . . : Հայերը ի՞նչ կը յուսան  
ձեզմէ. դուք ի՞նչ խելքի կը ծառա-  
յէք . . . . : (Այս ալ Յուղային մատնու-  
թիւնն է) :

Ո՞վ կը հաւատայ որ ասոնք՝ իրաւցնէ  
ըսուած և լսուած բաներ ըլլան։ Քիչ մը  
բնական խելք կօգտէ հասկնալու համար  
թէ ի՞նչ շինովի առասպելաբանութիւն-  
ներ են ասոնք, և ի՞նչ հոգւոյ տէր մարդ-  
կանց վիժած ստորոգելիք։ Բայց և այն-  
պէս այն արդար և փիլիսոփայական խօս-  
քը՝ զոր Հայրիկին բերանը դրած էք-թէև  
բոլորովին սուտ է և զրպարտութիւն-  
մեր և բոլոր ընթերցողաց կողմէն ձեր  
ճակատին զարնելու համար, կրկնելիք  
պատասխաննիս է թէ՝ դուք անիրաւ-  
ներ, հապա ձեր ըրածներն ու թողած-

Ները չէք ըսեր։ Դմւք, որ զայլս կամ  
բաստանէք, կը դատէք, և բարոյապէս  
՚ի մահ կը մատնէք, ո՞յք են արդեօք ձեր  
գործերն ու արարքը։ Հայրիկը՝ գոնէ  
ձեր մարդկօրէն մէկ սխալանքն ալ չը  
դտաւ որ ձեզի յիշեցնէր այդ երկարա-  
պատում բաշաղանաց միջոցին՝ երկւոր-  
եակ Հրեշտանէք ՚ի մարդկանէ . . . :

Գոնէ չմտածեցի՞ք մէկ անդամ որ հը-  
րատարակութիւն մը՝ որչափ անճոռնի,  
փցուն և գծուծ ըլլար՝ դարձեալ անշուշտ  
հետաքրքիր ու շադրութենէ չկրնալով  
վրիպիլ պիտի խայտառակուէր հրապա-  
րակաւ օր մը՝ ինչպէս այսօր խայտառակ-  
ուեցաւ այն գիսաւոր ստութեամբ իբ-  
րու թէ զամենայն բանս այսոքիկ ասա-  
ցաք առ սեամ դրանն պատրիարքի՝ և  
նա լռեաց, ծան չխան։

Էյի եալան՝ պու եալան, ֆիլի եութ-  
թու պիր եըլան։

Շապիկ փոխենք։

Դուք կըսէք թէ Ս. Կարապետի վա-  
նից Ս. ոսկին կարին Պօղոսի կին կերաւ  
և մարսեց։

թէ որ վանքը՝ իրաւցնէ այնչափ ուշ  
կի ունի որ այս տեսակ շռայլութիւնեւ-  
րու անդամ դէմ կուտայ , դուք , դո՞զ  
և աւաղակնե՞ր , ուրեմն ի՞նչ խղճով աս-  
դին անդին նուիրակութեան կ'ելնէք  
խեղճ ժողովուրդը կեղեքելու , այնպիսի  
արուեստակեալ ձեւերով՝ որ մուրաց-  
կաններն անդամ կը սօթտէք :

Վերջին անդամ Զմիւռն , Պօլիս և  
Մօլտօվալաքիայի կողմերը շրջագայած  
ատեննիդ՝ այդ ճշորութեանները որ հիմայ  
կը խոստովանիք , թէ որ ժողովրդին ալ  
վեհա յնաբար քարոզած էք , ալ ինչո՞ւ ու-  
րեմն արդեանց սովէն տաղնապելով կը  
տրուաք , ժողովրդոց կրօնասիրութեան ,  
ազգասիրութեան վրայ , և յանիրաւի կը  
բամբասէք ազգին նկատմամբ ինչ ինչ  
բնաւորութիւնները՝ զոր դուք կ'ստեղ-  
ծաբանէք օրինակը ձեր անձէն միայն  
առնելով : ( Ալէմի նա՞սըլ պիլիրասին , —  
գալպիմ կիպի ) :

կամ ազգին վրայ բարդած այդ ձրի  
զրագարտութիւններնիդ սուտ է , և կամ  
վանահօր մը շռայլութեան վրայ ըրած

ամբաստանութիւննիդ :

Այս երկու կէտին ո՞րն ալ ըլլայ նէ ըլլայ , դուք լեռան վաստակներ , ամենեւին չէք կրնար ինքզիքնիդ արդարացընել :

Ո՞ր կողմը գառնաք , դարձեալ տիղմերու մէջ թաթաւելէն զատ՝ ուրիշ ճանապարհ մը չէք կրնար գառնալ , ճիշդայն ծովամոյն եղողներուն նման՝ որք որչափ ալիքներուն հետ մաքառին , այնչափ անդունդը աւելի շուտով գահավիժելու վտանգը կը վաղվաղեն :

Բանդագուշանք մը :

Քիչ մը յառաջ՝ Սըբագանին թէեւ շատ ըսելիքներ , կ'ունենան , բայց կը լըռեն , ինչու որ միջոցը չէր ներեր կ'ըսեն . Ետքերը՝ միջոցներու շեմք գիտեր ինչ փոփոխութիւն կ'ըլլայ՝ որ մինչեւ իսկ եալը - չարխընիի հայհոյութիւններ բերներնուն անխտիր գուրս ժայթքելու ամենեւին երկիւղ մը չեն կրեր :

Ասանկ +աջուբէւներ ունենալու համար մարդ քրթերէ պատուաստուած ըլլալու է . . . , որ միլիոննաւոր ժողովարդ ներ-

կայացնող Պատրիարքի մը երեսն ՚ի վեր  
երրայեցաբար բաշաղեն, “ Վո՞յ դայ Հայ  
ազգի գլխին, որ դուք էք Հայ ազգի  
Պատրիարքը . . . . : ( Վայր ձեր գլխին,  
ձեզ ձկնողին, ձեզ կաթ ջամբողին, ձեր  
ոտքերն առաջին անգամ վանքէն ներս  
խօթողին ) : Եւ դու Հայրիկ՝ պիտի մեռ-  
նիս, դու որ շատ մարդիկ ՚ի զուր զոհե-  
լով՝ խոր գերեզմանի գիրկը դլորեցիր,  
նոցա կեանքը ցաւօք և հեծութեամբ ” :

Եթէ այդ՝ այդովէս ըլլար, դուք մին-  
չեւ հիմայ շատոնց գերեզմանական էորն-  
ւնիներ պէտք է ըլլայիք :

Դուք ինչո՞ւ առլիք՝ ծնունդք իժից,  
բնութեան ժանտախտներ :

Թող մնան կ’ըսէ գերագոյն հեղինա-  
կութեան մը անսայթաք օրէնքը . — Ա-  
տանկները՝ ՚ի յաւիտենից արդիլեալ ա-  
պաշխարող մարդկութեան շլթայները  
կըծող մուկներն ու օձերն են : Թողնելու  
է որ կըծեն :

Հետաքրքրական :

“ Սրբազանը դառնալով դէպ ՚ի կա-  
րապեա վարդապետ՝ ծօ անիրաւ, դեռ

կը խօսի՞ս, հըն, խանէմ, խանէմ, և ձեռւ  
քը տանելով դէսլ՝ ՚ի գրապան, խանէմ,  
ինչպէս ես խանէմ. Վարդապետը ը-  
սաւ, ծօ՛ տէհ, հանէ տեսնենք, ի՞նչ է  
հանածդ-, որ կը բղաւես տանձ է թէ  
խնձոր. Սրբազնը գարձեալ գոռաց, —  
Հանեմ թէլէկրաֆի թուղթը՝ որ Մշոյ ըէ-  
յիսներուն հետ միանալով՝ թէլը քաշե-  
ցիք, Տեղապահ Արիստակէս եպիսկոպո-  
սին թէ՝ մենք Խրիմեանը՝ մեր երկրին և  
վանքին առաջնորդ չենք ուզեր, չէ ը-  
տորագրութիւն է դրուած թէլի թուղ-  
թին մէջ, ինչպէս ես որ խանեմ գուրս,  
հան ըսաւ վարդապետը, ձեր սուտը,  
ուղիղը՝ այդ տեղը յայտնի կը լինի : Ցէհ,  
հանէ, տէհ հանէ տեսնենք իմ ստորագ-  
րութիւն կայ ան թղթին մէջ՝ թէ ոչ, ես  
նոր ձեղ հետ կը խօսիմ: Սրբազնը տես-  
նելով որ իր ստորթիւնը պիտի խայտա-  
ռակի, վասն զի վարդապետի ստո-  
րագրութիւնը չկար թէլի թուղթին մէջ.  
մէկէն խօսքը փոխեց, է՛յ ըսաւ, գու չէ-  
իր ըէյիզներուն դրդող հան, — Վար-  
դապետը ըսաւ, աղէ՞կ է՝ թէլը թողու-

ցեր, հիմայ ալ կ'ըսես ըէյխները դու  
քըգուեցիր . . . . :

Բացայայտենք :

Այս տանծիկոթաբանութեամբ Ա.  
Հայրիկը՝ այնչափ պարզ անձ մը կուղեն  
ներկայացնել հասարակութեան իրենց  
խամսալաղ Խելքին նժարովը՝ որ իրք  
հեռաղ բական նամակի ստորագրութիւ-  
նը չդիտնար թէ նամակոգրին ինքնա-  
դիր ստորագրութիւնը չկրնար ըլլալ :

Եւ այս ինքնաստեղծ պարզութիւնը  
շինծու ստախօսութեան մը փոխարկելով  
կուղեն այնպիսի անուանարկութեան մը  
ելլել, որպէս թէ որբաղանը ինքը՝ ան-  
խոհեմաբար իր խօսքովը տեղիք տուած  
ըլլայ :

Ո՞ւր ենք անմիտներ, ուր ենք. Պօլ-  
սոյ հասարակութիւնը՝ միթէ ձեր վան-  
քին հաւերը կարծեցիք, որ ունեաւ ով-  
ակ խափիք :

Ո՞վ ըստւ ձեղի, որ հրապարակախօ-  
սութեան ասպարէզին մէջ ատանկ եւն-  
աներ կան, իսու չոր եւրոբուզ :

Չէք գիտեր, և չէք լսած, որ հոս

Էշերն անդամ եղանակով կը զռացնեն :

Զեր անթիւ յոռութեանց մէջ՝ գէթ պատմական օրէնքն եթէ յարգել գիտնայիք՝ վրանիս կը մնայիք : Միթէ ամեն զեղծումները՝ ձեզի համար, ձեզի հետ, ձեր հեղինակութեամբը սրբագործուածու նուիրագործուած են, ի՞նչ են :

Երդուընյած էք արդեօք, ամեն տեսակ ծայրայեղութեանց մէջ Ո. կարգի գերակատարներ հանդիսանալ :

Ուխտած էք ապաքէն ոչ ուտել և ոչ ըմպել՝ մինչև սպանցէք բարոյական անձնաւորութիւննիդ, որ արդէն հոտեալ իցէ, քանզի աւելի քան զոտասնամեայն է :

Մշոյ խնդիրը՝ Աահմանադրութեան տարեկից ըլլալո՞յն հանդերձ՝ թէև քանիցս Աղդ. վարչութեան ծանրատաղտուկ զբաղմանց մէջ փիւսկիւլիւ պէշայի պէս քիչ մը քիչ խոչընդոտներ յարուցած չէ, բայց և այնպէս՝ ամբողջ ազգի մը գլուխ չի կրնար ուտել :

Դուք և ձեզիպէսները միայն ասանկ պարագայներու մէջ՝ ուշ կամ կանուխ

էշ—նահատակներ կըլլաք անշուշտ, ինչ  
պէս ձենէ առաջ եղածներն ու ձենէ ետ-  
քը ըլլալիքներ շատ համրած և պիտի  
համրէ տակաւին աղդային անաշառ-  
պատմութիւնը :

ըդարեւ էշ է այն մարդ՝ որ իր դի-  
մացինը իշու տեղ կը դնէ . այնպիսին է  
որ երկրիս վրայ ամեն ատեն իրեն հա-  
մար նորանոր փորձութիւններ պատրաս-  
տելով, դէպ 'ի կորստեան անդունդը  
ունենալ կը վազէ, և յանիրաւի տրտունջ-  
ներ կը բառնայ երեւակայական բաղդի,   
պատճառանաց և պարագաներու դէմ-  
երը չարաշար սատակման կը մատնէ ինք-  
զինքը՝ բիւրանգամ նղովելով զաշխարհ  
ու իր անձը, որոնք խիստ անմեղ դոր-  
ծիքներ պէտք էր դատուէին նախախը-  
նամութեան շնորհած անձնիշխանական  
սուրբ, արդար և անսխալ օրինաց առջեւ-  
թիշեցէք այն առածը՝ որ կըսէ, “Է-  
տէն՝ պուլուր տիւնեասը տըր” :

Ասանկները՝ վազը մէկալն օր քիչ մը  
նեղի դալու ըլլան՝ ի՞նչ զրպարտութիւն-  
ներ և ի՞նչ դանդատներ չեն բարդեր

խեղճ ազգին դլխուն, իրենց վիճակը՝  
ամենուն աշքին առջեւ դնելով, բամ-  
բասելով և մեղադրելով Հայութիւնը՝ որ  
իբր թէ իր եկեղեցականները այն առ-  
տիճան թշուառութեանց և տառապա-  
նաց մէջ թողարած ըլլայ: Միանգամայն  
չխոսանովաննելով բնաւ թէ՝ արդեօք ո՞ր-  
քան պատճառներ արուած են իրենց  
կողմանէ՝ մինչեւ որ ինկած են այդ դրոյն  
մէջ, զոր անոնք ուրիշներու համար փո-  
բած ու պեղած էին:

Առակ մ'ալ խօսինք, իրրեւ յար օրի-  
նակ սա ներկայ խնդրոյս:

Ազահ մարդուն մէկը՝ օր մը ծովե-  
զերքը պարտելու ելած, տեսաւ որ նա-  
ւէ մը խիստ երկայն և հաստը ուշին պէ-  
հաէ ահագին փայտեր ցամաքը կը հան-  
ուէին, երկու աշքի արալըին ինչպէս ը-  
րաւ չըրաւ, վերջապէս յաջողեցաւ ա-  
նոնցմէ հատ մը գողնալով օմուզը շալ-  
կած՝ ցամաքին դէպ 'ի ետեւի կողմը ե-  
լած լեռնէն 'ի վեր փախցնելու:

Ոյնպիսի խիստ ծանր բեռի մը տակ  
ճնշուած՝ սիրտն ալ ահ ու դողի մէջ,

մադլցելով՝ դէպ ՚ի վեր ելած ատեն։  
Ճնկուըները դողդողալով, շունչը կորած  
տապախառն արեւուն խորշակներէն ալ  
նեղուելով՝ մինչդեռ արփւն քրտինք կը<sup>1</sup>  
թափէր, և մահուան դողը կը դողար,  
յանկարծ աչքերը դէպ յերկինս բարձ  
բացնելով՝ “Սատուած իմ, ըսաւ. կը<sup>2</sup>  
տեսնաս անշուշտ իմ տագնապներս, ու  
ըեմն կազաչեմ այս քրտունքս — որ էք  
պէս կը վազեն — մարտիրոսաց արեան  
հետ խառնես ..”

Ըստ սմին օրինակի, մեր այս երկու  
բաներուն ե՞ն ալ՝ իրենց համար գործքեւ  
ըովը՝ Ազգի մը դլխուն պատիժ ու պաւ  
տուհաս կտրելու համար՝ խաներուն պուշ  
ճախը մնալնին, անօթի պառկելնին, ճաւ  
նապարհորդային նեղութեանց հանդիւ  
պելնին, կշտամբանաց և հալածանաց  
արժանանալնին, զրկանաց առկալնին,  
անհրաժեշտ ամբաստանութեանց մատ  
նուելնին, վերջապէս այս կերպով՝ բէր  
բէրուշան ըլլալնուն նախազատնառները՝  
թող իրենցմէ փնտուեն, ուր պիտի տես  
նեն անշուշտ թէ ուրիշ բան չեն, եթէ

ոչ անժուժկալութիւն, ագահութիւն, հեշտասիրութիւն, որկրամոլութիւն և ամենայն չարեաց արմատն՝ զարծալմսիրութիւն :

Հազար անդամ կրկնեմ, դարձեալ շեմյագենար ըսելէ՛ թէ ասանկ մարդիկ փոսերնին՝ իրենց ձեռքով կը փորեն, և ՚ինանիր կը բամբասեն ու կը թշնամանեն, զոմն այսպէս և զոմն այնպէս :

Մերկ ճշմարտութիւն մը :

Խրիմեան, ոչ առաքեալներէ մեծ, և ոչ նոյն ինքն էՄՄԱՆՅԻԵԼԵՆ վեր մարդմէ՛ : Միթէ հնար էր որ ամեն ամբաստանութիւններէ զերծ և աղատ մնար : Ատոր ովլ կը զարմանայ : Բայց վայ իցէ մարդուն այնմիկ՝ ոյր ձեռն եկեսցէ դայթակղութիւն : Եւ ՚ի վերայ այսր ամենայնի, միթէ հնարաւոր բան է, որ որչափ ուժգին ալ ըլլան հողմունք, միօքինակ տապալել կարողանան ամեն ծառ իրենց արմատէն : Քառ և ոչ երբէք : Հոսալ կը յիշեցնեմ ձեզի թուրքին առածըթէ՛ հէր դուշուն էթի եէնմէզ :

Մենք դիտենք, որ ձեզի այնչափ

Հեշտ կուգայ արդարի մը արիւնը մատ-  
նելը՝ որչափ դասալիք զինւորի մը պա-  
տերազմի դաշտին մէջ անզէն ճանապար-  
հորդի մը դերի վարելը :

Եթէ դուք Ուրեւելեան պատերազմին  
զինւորներէն ըլքայիք, ի՞նչ խեղճ ո՞յնէն-  
ուր դերի չպիտի վարէիք արդեօք իբրև  
Ռուսօ դազախներ :

Այս տեսակ յուսոյ ակնկալութիւննե-  
ները՝ խիստ կարճատեւ ըլլալէն անմի-  
ջապէս ետքը, ձեր կենաց և պատռոյ  
վտանգներով՝ հազարապատիկ պէտք է  
տուժէք՝ աստ և 'ի հանդերձելումն :

Մինչև հոս գրածներնիս, մեր մտաց  
ոյժին և դատողութեան համեմատ՝ հա-  
մառօտ հերքում մը՝ սեպելով, ամենեւին  
միտքերնուն թող չանցունեն թէ՝ իրենց  
գրածներուն կարեւորութիւն մը տալ  
ուզած ենք, այլ մեր նպատակը մի միայն  
չայրիկի երդուեալ հակառակորդաց՝  
զէնքերուն տկարութիւնը աշխարհածա-  
նօթ ընել էր, ինչպէս որ կարծեմբաւա-  
կան ըրած ալ եմք :

Ասկէց ետքը քիչ մ'ալ իրենց հաս-

կնայի ոճով վերջին անդամ տեսութիւն  
մ'ալ ընենք ու այնպէս քէմէնչէն խօլ  
թուխնին տանք . բայց նախ սա հետեւ  
եալ ոտանաւորը դնենք և ապա անցնինք  
մեր առաջադրութեանը :

Եթէ ունիք ականջ լսել,  
Արդէն շատ են, ինչ որ ըսի.  
Սեւին երես սապոն քսել,  
Ճերմկցընել չը հասկցուի :

Իմ միտս այն էր, ձեր պօչ սխմեմ,  
Թաթիկներնիդ մէկ քիչ քաշէք .  
Հայրիկին վրէժն ինչու առնեմ,  
Գուք ինքնին ձեր տուն կը քանդէք :

Զի այն օրէն յանցանք մեծ էր,  
Մինչ Վանահայր ձեր Խրիմեան,  
Հերիք ըստ այդ լակոտներ,  
Վանքին կաթը ծծեն կենան :

Պատրիարքի արժանիքը ,  
Քեզ զի փայթ է Տէր Եսայի .  
Ճանչցնելու վլիդ պարտքը ,  
Ռւրկից առիր չարաճնի :

Մինչեւ շահ մը՝ որ չունենաք,  
Ազգին անկած ծակ աչքերով,  
Շատոնց համայ կելնէք կերթաք.  
Յոտից փռչիս թօթափելով:

Այս որ բազմաց սէր խանդակաթ  
Չեր աչքերուն փռւչ է մասած,  
Յուսոց ծիծաղն, Հայոց այն բաղդ,  
Ի՞նչու ապրի ձեր դէմ կանգնած :

Ուրեմն արիք վիճ մշակներ,  
Ահա ժառանգն է սա ազգին,  
Ո՞հ չեն պակսիր, ձեր մօտ ձեռքեր,  
Քամել արիւն այս արդարին :

Եթէ խլել եւ տապալել,  
Է ձեր պաշտօնըն 'ի բնէ,  
Մանգաղդ ընդէր չէ սովորել  
Զարն հատանել 'ի սկզբանէ :

Բարւոյն՝ անկումն է կործանում,  
Այլ թէ չարին՝ վեհ յաղթանակ .  
Ընդէր չունիք այն բորբոքում,  
Ա՞նդ դիմել, ուր կայ միցանակ :

Խօսակցութեան շինծու ձեւեր,  
Ա՛հ, ինչ խարդախ, ինչ խարուսիկ,  
Ձեր խիղճ կառնէք սեւերեսներ:  
Ուժերնեւդ տակ բոպիկ բոպիկ:

Կրլած ունին ատանկ պօլմ-  
Մեր Պօլսեցիք բընաւ երբէք,  
Դոււք ինչ մտքով մ պուտայլ-  
Մածուն ծախսել ոտք ելեր էք:

Գացէք, գացէք Քրտորդիներ  
Լեռան որսեր ձեզ կսպառեն.  
Ձեզ համար հոս՝ գոց են դոներ,  
Խօսքը մարդուն՝ մէյ մը կըսեն . . . .



## ՏՐԱՄԱԽՈՍՈՒԹԻՒՆՔ

— Պէտք ախաղար, ի՞նչ էք տուեր՝ չէք  
կընար առնել սա՛ վարդապետներէն :

— Ինչ որ իրենք տուեր՝ չեն կընար  
առնել Հայրիկէն :

— Իշտէ անոնք Խրիմեանի ըրածներ  
կըսեն և կը հրատարակեն կոր : Սաղըր  
իշխւն գա՞չ տէֆա էղան օգունուր : Սուտ  
խուլըլլալ պէտքը չէ եա :

— Ո՞րն է ըսածներնին, պատմէ՛ որ  
տեսնամ :

— Ականջդ խուրշին կաթեր է . չե՞ս  
լսեր որ պառ պառ կը պոռան թէ՛ Ա.  
կարապետի վանքը կործաներ է :

— Զէրզէլէ՞ է հաներ, ի՞նչ է ըրեր :

— Չիյտեմ ինչպէս ընելը, բայց սանկ  
կը հասկցուի որ՝ վանքին պօտուրումը  
գտնուած եաղին քիւրերը ճաթեցուցեր  
է . քիւմէսին հաւերը՝ սամսարներուն  
խղդել տուեր է . կովերը մորթեր՝ փաս-  
տըրմա շիներ, մէտէյին ուզած տեղերը  
հէտիյէ ղըկեր է . խայմախի, կարագի խա-  
ղանները՝ շալկեր Վարագ թուցեր է .

Ոռուսաստանէն կորզած քարպօններովը՝  
եպիսկոպոսութեան քիւլահը խաբմիշ է  
ըրեր . վանքին միաբանութիւնը՝ մէկիկ  
մէկիկ մորթեր՝ տէրիներնին սօյմիշ ըրեր  
մէջը պիւթիւն թուլում բանիրի լեցու-  
ցեր և էրզրումայ սանճախը փէշկէշ տա-  
րեր է . վիլայէթի միւթասարը գութեան  
խիւլուս չախմիշ ընելուն վրայ ալ մա-  
թուֆ ղազէթաճիին մէկը գօրդօրցուցեր,  
մինչև պատրիարքութեան խափտանը  
հագուցեր է :

Վանքին մախսէնները գտնուած 30—  
40 տարուան այն պատուական նոյեան  
հին գինիներուն մէջ ջուր խառներ է ,  
ան կիւզէլիմ թութէ հանած բախիները՝  
միաբանութեան յարկինք չանցունելով՝  
ուրին ճուրին ըրեր է . սըկէ նըկէ հէտի-  
յէ եկած պարարտ օրտէկները՝ մարդու  
խուրսախ չանցած՝ ողջ ողջ կը համբառ-  
նան եղեր . մատղաշ խուզիները ինքը  
միայն ճաշակելով՝ կաղ ու բորոտ այծե-  
րը միաբանութեան զօրով թօփուզով կը  
կերցունէ եղեր . չիփտլիկին կատանային  
պէս կիւզէլիմ խըսրախները՝ վարդա-

պետներուն էմնիյէթ չընելով՝ հառըլ  
հառըլ դիմացի լեռը կը փախցունէ՝ կէօ  
լիւքները միայն միաբանութեան կը թու  
զու եղեր :

— կէօլիւկը ի՞նչ է :

— կէօլիւկ ըսուածը՝ մանր մունր ցած  
ու պըտըլիկ աւանակներ են, որոնց վը  
րայ մեր գրքակալ և էշէքչքմէղ վար-  
դապետները նստած ատեն՝ զավալլընե-  
րուն ոտքերը բիւթիւն բիւթիւն գետի-  
նը կը քսուի եղեր :

Այն խորոտիկ բաստեղները՝ փոխա-  
նակ ծուածեղ շինելով՝ վանականաց  
բարբարել տալու, սխտոր քացախ կը  
կերցնէ եղեր, և ինքը սխտորէն շատ ա-  
խորժած ըլլալուն համար՝ խեղճերուն  
փիլավին վրայ ալ անցունել տալով՝ սար-  
մուսախլը փիլավպատրաստել կուտայ ե-  
ղեր։ Թող չի տար եղեր որ չոր դայիսին  
քիւլահ շինելով՝ հէմ ուտեն, հէմ վե-  
ղարի տեղ գլուխնին անցունեն։ Տէրըն-  
տասի իրիկուն Ս. կարապետի անունով՝  
ժողված կամ գողցած փայտերնին շթո-  
զուր եղեր որ իրենց բարեկամաց կամ

աղգ ականներուն տուները աշըրմիշ ը-  
նեն : Խնայողութիւնն ալ այնչափ սաս-  
տիկ է եղեր որ՝ քէօմիւրի տեղ միշտ  
թէղէկ կը վառէ եղեր : Արեղաթողի օ-  
րերը՝ մինչդեռ ուրիշ վանահարց օրով  
հերիսա կը ծեծեն ու կ'ուտեն եղեր , ա-  
սոր օրով աղւորիկ սորբօքայով ծեծ կու-  
տեն եղեր : Առջի վանահայրները՝ բարե-  
կենդանի օր միաբանութեան հետ Ս. շըխ  
թուրա կը խաղան եղեր , բայց ասիկայ՝  
հինաւանդ սովորութեան ականջ չկախե-  
լով՝ ասոնց հետ միայն ջուռը , իսկ վան-  
ցի տղայոց հետ փատուկը կը խաղայ ե-  
ղեր , Քրիստոսի այն խօսքը առարկելով  
թէ՝ « Թոյլ տուք մանկուոյդ այդմիկ , զի  
դոցա է արքայութիւնն Աստուծոյ » : Ա-  
մենեւին թոյլառութիւն չըներ եղեր՝ որ  
վըճկին օրերը ուխտաւորաց քովս եր-  
թալով՝ « խաւանօղներնուդ մէջի հաւ-  
կիթները տուէք որ՝ անոնք կոտրենք տէ՝  
ձեզի չի դանանք » ըսեն : Սաստիկ կար-  
գիլէ եղեր տաղաւարներուն գեղերն եր-  
թալ « գայլ ըլլանք տէ՝ գառներ պատ-  
ռենք » ըսելու : Վերջապէս՝ վասն զի

Հայրիկն ալ վաճեցի էր, վասն զի շինաւ կան էր, վասն զի գլուխը չօպանի պէս բէօստէքի խալքախ կը դնէր, վասն զի քաջաքարող էր, վասն զի Արծիւ կը թըռուցէր, վասն զի Վարագայ վարդապետները ամեն պերեց վանքի մէջ լեցուց, վասն զի Նախաւլը գուլպա կը հագնէր, վասն զի ճակատի բէրշէմն՝ կալքաղից, սաղաւարդից և չախալթագից տիւրս կը ցատկէր, վասն զի Աշըն — Ղարիպի պէս միշտ “ա՚իս, օ՚ֆ” կը հառաչէ . . . :

— Էյ ճանըմ, գլուխս ճախեցաւ պէ, այդ ո՛րքան բան շարեցիր, սօնը չեկաւ գնաց : Ան աւանակներն ալ՝ այդքաննեղութիւններու համբերելով՝ կէնէ խավուխ սալլամիշ ընելնուն տեղ՝ զօ՞ր բան մ՚էր վուճուտը վերցընել :

— Հէյ քուղում հէյ, գուն գիտեսքի ատոր բրօվան չըրի՞ն : Ըրին, ըրին ամմա՝ անիծից արմատ դնտակը տակ փախաւ :

Ահա ես խրիմեանի յանցանքները վեր՚ի վերոյ սկատմեցի, մնացածն ալ՝ ասոնց

պէս բաներ են : Դուն ի՞նչ ունիս ըսելիք  
սա ղարիպ վարդապետներուն համար ,  
որ լեզու ունին՝ բերան չունին , կուտմը  
աղ դիր բերաննին՝ մորթէ՛ զավալլըները :

— Անոնց մերամը գիտե՞ս ի՞նչ է :

— Ես ի՞նչ գիտնամ , կոկորդիլոսի պէս  
կուլան ամմա՝ ի՞նչ ըլլալը չեմ հասկնար :

— Ուրեմն եկուը ես ալ քեզի այն  
հասկցունեմ . Բայց նախ եւ առաջ սա  
պէտք է գիտնաս որ՝ Մշոյ խնդիր ըսե-  
լով Ա . Կարապետի վանուց մէկ քանի ու-  
ժեռէյէ վարդապետներուն ուժը տեղը բե-  
րելու կամ չբերելու դժուարութիւնը  
խմանալու է , և այս տասնամեայ կիճիուը  
ուրիշ բանով չի յարդարուիր՝ եթէ ոչ  
կամ Խըիմեան յանցաւոր հրատարակուե-  
լու է , կոմ ասոնց ճիտը մէյ մէկ քար  
կախելով Յովհաննու պէս ծովը նետելու  
է որ Մշոյ աշխարհքը խաղաղի :

— Ա՛յ օղուլ , ինչո՞ւ այդպէս խաւարի  
մէջ կը քոլես , քու խելքդ անդամ մը  
Խըիմեանի արդարութեան կողմը վազեր  
է , բնականաբար հոն ամեն բան ուղիղ  
կը տեսնաս , եկուը անդամ մ ալ ասոնց

կողմը անաշառապէս փոքր ինչ աչքէ  
անցուր և տե՛ս, գուցէ այնպիսի իրա-  
ւունքներ ունենան, որ տավաճինին խա-  
տին ըլլալուն համար չկրնան պաշտպա-  
նելու :

— Խօսք կը հասկնա՞ս, ինծի ան ըսէ :

— Ինչո՞ւ չեմ հասկնար, խօսք հաս-  
կցող հուսա ավ մնաց, մէյ մը ես, մէյ  
մ'ալ սա քովի տունին պատը :

Կատակ պէտքը չէ, խնդիրը ծա-  
նըր է :

Ամա՞ն, առջեւնիս ծով է, չելես  
ձեռքերդ խաղցունես՝ անիտէ պաթմիշ  
կըլլայ հա՛ :

Յիս նայէ՛ Պարոն . Տավաճինին ե՞րբ  
խատի եղաւ, խնդիրը՝ քանի՞ տարուանէ:

Է՛յ աղէկ ավօդաթութիւն տօղ-  
րուսի, սանքի խատիութիւնը թէ որ  
պատրիարքութիւնն է ըսել կուղես՝ տա-  
հա նոր բան է, անկից տուած ինչո՞ւ չը  
կրցին իրաւունքներնին պաշտպանել՝ եթէ  
ունէին, անանկ չէ :

— Հայ, հայ . հէմ խօսք է, հէմ Աւե-  
տարանինն է :

— Քու խելքովդ միայն այդպէս է ,  
մէջ մ'ալ ինծի հարցուր :

— Սէպէ քի հարցուցինք , խիկար ի-  
մաստուն ըսէ նայինք :

— Ես բէք անանկ մեծ իմաստուննե-  
րէն չեմ ամմա , քեզի պէսներն ալ՝ պա-  
տէմ թըրնախիով քիթիս ծակէն կը հա-  
նեմ :

— Զդէ՛ , վաղ եկանք , խօսքերնուս  
կարգը մտնանք , քու խելքովդ . ինչպէս  
է ան ըսէ՛ նայինք :

— Իմ խելքովս միաբանի մը համար՝  
հա՞ պատրիարքութիւն , հա՞ վանահայ-  
րութիւն իքիսի պիր ուստա իշխի պէս  
բան մ'է շիտակը կըսեմ , ի՞նչ մեղքս  
պահեմ :

— Հա՞ , հա՞ , հա՞ . ծօ անոր համար վա-  
նահայրութենէն մարդը բապուճսուղ կը  
փախցնէին կոր : Միթէ դուն կը կարծես  
որ վանահօր դէմ մայմունի պէս դողա-  
ցող միամիտ խախալօղներէ՞ն են ասոնք ,  
անամն են՝ անամն : Վանահայր մը մինչեւ  
խօղ խապուխին չը խօթեն նէ՝ հիշ եա-  
շաթմիշ կընե՞ն :

— Ես ընդհանուր առմամբ կարծիք կրյայտնեմ կոր, ատանկ պաշըզօղուխներուն խելքս չը հասնիր .

— Անանկ է նէ՝ կարճ կապէ .

— Ըսել է որ ատոր համար Խրիմեանը ատոնց բանին չէ եկեր :

— Անշուշտ, նա քանի որ վանական զեղծումները բառնալ, բարեկարգութիւններ հաստատել կուզէր, անոնց եէնիչէրիյի օճախը պաթըրմիշ ընելու պէս բան մ'էր, քիչ մը քիչ օրը 40 անդամ հաճի էյվաթի պէս հէլպէթ դիմացը կը տնկուէին աղուէսաբար բէշերնին վրայ բերելով մեռելի պէս բարեւ բռնած աճապ ի՞նչ կըսէին : — Նստէք վարդապետնե՞ր. ահա հոն գտնուածի պէս ձեզի պատմեմ :

— Ծառայ եմ քաւ լիցի, մենք քէօ վոտաց հողն ենք . մենք քէօ քով ալլահի խարընճան ենք : Արժանի չենք ոչ միայն նստելու, այլ մեր կանգնելն անդամ քէօ դիմաց միեծ մեղք է . չէ տիւ Ա. կարապետի խաջորդն իյես . — հրամայեցէք եթէ բանըմ ասելիք ունիք —

ըսկուն պաներ որ կանես տիւ մեր եիւ  
 վա կը քրքրես , մեր օճախ կը մարես ,  
 խաղարաւոր տարի այսպէս գնացել ենք  
 ինչու նոր պաներ տիւրս կը խանես , հի-  
 մի մեր ազգ Յռանկերաց քէօվ ամեն  
 պան կը սովորեն՝ վանքերն պանըմ չեն  
 յուսար , մէյէր գիւղացիք միանդամ որ  
 աշուշնին պացուէ՝ ըսկուն մեզի խաց  
 չեն տայ , տիւ մեզք կանես էսա քէօ  
 անձին , մեզի ու միեր վանից ու միեր  
 յաջորդներաց , թող տուր ըսկուն եր-  
 թանք , ինչպէս որ գնացել ենք , մեզի  
 ահա ոչ ոսկի և արծաթ պակասի , մեր  
 շտեմարաններ ամմեն համբարեալ՝ կուղէ  
 սովու աշխարհք տանէ , կուղէ խայոց  
 ազգէ մէկ խատ չի մնայ . կուղէ Քրթեր  
 երկիր ամմեն թալլեն , մեզի պանըմ չեն  
 կանայ աներ , այն ինչ ժամանակ որ կա-  
 մենանք մենք էլ կը քրթանանք միեր  
 վանք կէնէ մեր մօտ կեղնի , կաղաշեմք,  
 երես անկեալ կաղաչեմք , մեր ճամպախ  
 մի մոլորցուցեր 'ի սէր հրաշալի Ս. կա-  
 րապետի ոսկորներաց միեկ մէնդըլէ ալ  
 առեմք քեղ խօսքերնիս վերջացուցեմք

խասկացա՞ր , խօշ չի խասկացար ինչ ա-  
նեմք , քիւնչի մեր ծեռնից պանըմ չի  
դար :

Ժամանակով տղէտ քահանային մէկն  
որ ընաւ կարդալ՝ ժամերգութիւն ինչ  
ասել է չեր գիտեր , բայց ռամիկ ժողո-  
վուրդէն—որ Աստուած պակաս չանի—  
այնպէս խարել էր որ ամմեն օր եկեղե-  
ցւոյն մէջ բուրուառ ծեռքն այս ձայ-  
նաւոր կը կարդար .

Երթանք Բէնկայ ,

Գանք Սէմառայ ,

Երթանք Բէկայ ,

Գանք Սէմառայ .

Մէկ օր մը տիւրս ելեր՝ լսեր է տի՝  
Ալիթան անունով գիւղ մը կայ , հետեւ-  
եալ օր՝ իր ժամերգութեան միջոցին  
այսպէս ասաւ .

Երթանք Բէնկայ ,

Գանք Սէմառայ Ալիթան :

Յանկարծ բուրվառ կործաւ , մէջի  
կրակներ ամմեն ժողովրդոց վրայ թա-  
քաւ , սկսան աղաղակել՝ մինչեւ հիմայ՝  
Երթանք Բէնկայ , գանք սէմառայով լսաւ

կերթայիք տէր պապա , ինչուտ էր պէտք  
ալիթան , որ մեզ փորձութեան խանդիպ-  
ցուցիր : Ճշմարիտ է ասաց քահանան ,  
ես իմ ծառքով իմ գլխուն պէլա խանի :  
Կը խասկընաս Արբաղան , որ միեկ բառ-  
աւելցնելով ինչքան չարիք խասաւ ի-  
տայ տրտիրոջ համ ժողովրդի գլխուն :  
Հիմայ որ տիւ էտքան տրպատուններ ,  
տպարաններ , կիրքեր , կազաթաներ ,  
կանոններ , տահա չեմ գիտեր ինչ պա-  
ներ որ կաւելցուցես՝ դժոխքի կրակներ  
ամմեն մեր վրայ պիտի թափես , տիւ ալ  
վերջ բիւշման կենիս , լախքին նէ ֆոյ-  
տայ՝ կուշ էլտէն ուշտի : Սօն բիւշման-  
լըք կասեն , ահճէ էթմէզ : Եկու քէօ  
նախորդներաց ճամպախ պոնի , ըսկուն  
երթանք ուտենք խմենք մեր քէֆ նա-  
յենք , Աղդին աղխորդող ըլլինք : Կէնէ  
տիւ կիտնաս ծառայ եմք մեր մօտ էլ  
պան չի մնաց ասելու :

— Դուք , ձեր խրատներ ամմեն ինձ  
տուեցիք , որ ասոնք են՝ այնպէս չէ՞ :  
Գնացէք ձեր տեղ՝ զոր ինչ հրամայեալն  
է ձեզ՝ զայն արարէք : (Քիթին տակէն)

զեզի մէկ պատիժ պէտք էր՝ որ երկին քէն իջնար, ահա լորիմեան ղըկեց Աստուած ձեր դլխուն վրայ, ինչպէս Մովսէսը՝ Փարաւոնի տան վրայ։ Տեսնենք թէ Տէրն ինչ կը յաջողէ։ Եւ անոնք ալ իրենց սենեակ քաշուելով՝ — ծօ, առ պալալի մարդի, էսոր տակ մէկ կարպուղի կապուղ դնենք՝ կայտըրմիշ անենք, կէշ չելնի, ասի խօսքի կալումարդ չի, բնաւ երբէք։

Այն ատեն կարապետ և Եսայի մալ կը օղլուները՝ անհնարին ցասմամբ ձեռքերնին դէպ յերկինս բարձրացունելով՝ երդուան յանուն Ա. կարապետի՝ ոչ ուտել և ոչ ըմնպել մինչեւ սպանցեն զիօրիմ եան։

յնի մէնիմ, Աստուած իմ . . . ։

Մամուլն Ետպանճին չէ։

